ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Խաչատրյան Արթուր Խաչիկի**

# ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԶԼՄ-ՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ և ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

**ԵՐԵՎԱՆ – 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **ԵՐԻՑՅԱՆ ՍԵՐԳՈ ՍԱՐԳՍԻ**
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **ՊԵՏՐՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ**
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

**ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍՏՂԻԿ ՇԱՄՍԻ**
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունիսի 21-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 25 Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ–ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 18-ին:

Մասնագիրական խորհրդի գիտական
քարտուղար՝բանասիրական
գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է հայկական ԶԼՄ-ների զարգացման ուսումնասիրությանը կոնվերգենցիայի գործընթացի ազդեցության ներքո: «Կոնվերգենտ լրագրությունը» համեմատաբար նոր երևույթ է, որի կայացումն ու զարգացումը մեդիա-փորձագետներն անմիջականորեն կապում են ինտերնետի և առցանց լրագրության հայտնվելու հետ: Այս երևույթը պայմանավորված է կարևորագույն գործընթացներով ու փոխակերպումներով, որոնց ենթարկվել է լրագրությունը 20-րդ դարավերջին, երբ փոխվեցին ոչ միայն լրագրողի աշխատանքի չափորոշիչները, այլև նրա հոգեբանությունը: Լսարանի համար անընդմեջ մրցակցության պայմաններում ԶԼՄ-ներն ստիպված էին լիովին փոխել խմբագրությունների կառուցվածքը, զգալիորեն կրճատել տեղեկատվական պատրվակի ի հայտ գալուց մինչև կոնտենտի տարածումն ընկած ժամանակամիջոցը:

Ատենախոսության մեջ ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են հայկական կոնվերգենտ ԶԼՄ-ների գործունեության առանձնահատկությունները: Կոնվերգենցիայի գործընթացը հանգեցրեց ԶԼՄ-ների բովանդակության փոփոխության և փոխակերպման: Այն մերձեցրեց մի քանի հարթակներ, և արդյունքում ստեղծվեցին միավորված խմբագրություններ: Աշխատանքում ուսումնասիրվել են միավորված խմբագրությունների գործունեության կազմակերպման հիմնական մոդելները:

ԶԼՄ-ների համակարգի վրա կոնվերգենցիայի ազդեցության կարևոր արդյունք է ժամանակակից լրագրության գործիքաշարի ու ժանրերի փոփոխությունը: Այս փոփոխությունները պայմանավորված են ինչպես համացանցի առանձնահատկություններով, երբ հնարավոր է դառնում մուլտիմեդիա տեղեկատվության փոխանցումը, այնպես էլ մի քանի տեսակ ԶԼՄ-ների միաձուլման գործընթացով:

Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը, տեղեկությունը թվային տեսքով պահելու հնարավորությունը, առցանց լրագրության ծագումը, ԶԼՄ-ների և խմբագրությունների մերձեցումն ու միաձուլումը զգալի ազդեցություն ունեցան ժամանակակից լրագրողի աշխատաոճի վրա: Ատենախոսության մեջ ներկայացվել են «ունիվերսալ լրագրողի» պարտականությունների քանակի ընդլայնումն ու վերափոխումը:

Ատենախոսության մեջ զանց չեն առնվել նաև «կոնվերգենտ լրագրության» զարգացման արդի հիմնական առանձնահատկությունները և ուղղությունները:

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը** պայմանավորված է որակական կարևոր փոփոխություններով, որոնց ենթարկվում է ԶԼՄ համակարգը կոնվերգենցիայի գործընթացի ազդեցությամբ: Այդ փոփոխությունները կրում են համակարգային բնույթ և վերաբերում են լրագրության՝ որպես հաղորդակցության ձևի, բոլոր բաղադրիչներին: Խոսքն ինչպես հաղորդակցության խողովակների ու նրա առանձնահատկության փոխակերպումների, այնպես էլ լրագրողական կոնտենտի բովանդակային փոփոխությունների մասին է:

Լրագրության մեջ կոնվերգենցիայի գործընթացի հիմքում ընկած է տեխնոլոգիական կոնվերգենցիան՝ կապված տեղեկատվության թվային ձևաչափի անցման և ինտերնետի հայտնվելու հետ: Տեղեկատվության ցանկացած ձևի փոխանցումը թվային ձևաչափի, դրա հաղորդումը էլեկտրոնային հաղորդակցության հնարավոր բոլոր խողովակներով պայմաններ ստեղծեցին լրագրության նոր տարատեսակի՝ առցանց լրագրության ձևավորման համար: Որակապես նոր վիճակ ձևավորելու համար առցանց լրագրությանն անհամեմատ ավելի քիչ ժամանակ պետք եղավ, քան մամուլին, ռադիոյին և հեռուստատեսությանը: 50 միլիոնանոց լսարան ապահովելու համար ամերիկյան ռադիոն ծախսեց 38 տարի, հեռուստատեսությունը նույն ցուցանիշն ապահովեց 14 տարում, ինտերնետը դրան հասավ ընդամենը 4 տարում[1]:

Ավանդական ԶԼՄ-ների կողմից ինտերնետի յուրացման գործընթացն սկսվեց 1990-ականների կեսերին: Դրա ակունքների մոտ կանգնած էին ամերիկյան տպագիր պարբերականները, որոնք նպատակ ունեին ապահովել եկամուտների հավելյալ աղբյուր: Հատկանշական է, որ էլեկտրոնային ԶԼՄ-ների առաջին օրինակներն առաջին հերթին նշանավորում էին տեղեկատվության տարածման խողովակների տարբերակումը, որն ապագայում դառնալու է տեսակային մեդիա-կոնվերգենցիայի կարևորագույն ասպեկտը: Ինտերնետի հաղորդակցային հնարավորությունների ստույգ գնահատումը կարելի դարձավ տեսաձայնային կոնտենտի տարածմամբ: Մեդիա-կոնվերգենցիայի երկրորդ կարևոր ասպեկտը լրագրողական մեկ նյութում նշանային մի քանի համակարգերի համադրումն էր: Խոսքը բազմամեդիա լրագրության՝ տեքստի, լուսա- և տեսանկարի համակցման մասին է:

Գործնական լրագրության որակական փոփոխությունները միաժամանակ ուղեկցվում էին լրագրության տեսության մեջ «մեդիա-կոնվերգենցիա» հասկացության մշակմամբ: Սույն հասկացության տեսական հիմնավորումները դիտարկելիս կարևոր է ընդգծել, որ կախված ժամանակից՝ մեդիա-կոնվերգենցիայի սահմանումները ներկալել և շարունակում են ներկալել տարբեր ասպեկտներ: Լրագրության ռուսաստանյան տեսական առաջին աշխատանքը համարվում է Ե. Լ. Վարդանովայի՝ 1999թ. հրապարակված «Դեպի ո՞ւր է տանում ԶԼՄ կոնվերգենցիան» հոդվածը, որտեղ հեղինակը հետևյալ կերպ է սահմանում «մեդիա-կոնվերգենցիա» հասկացությունը. «ԶԼՄ կոնվերգենցիային ամենամոտ հասկացությունը «միաձուլումն» է: Տարբեր դեպքերում խոսքը վերաբերում է տարբեր գործընթացների, բայց և միաժամանակ դրանց էությունն ամենաճշգրիտ ձևով փոխանցվում է հենց այդ բառով»[2]:

Տարիներ անց Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր Հենրի Ջենքինսն ավելի հանգամանալի ձևակերպեց հասկացության սահմանումը. «ԶԼՄ կոնվերգենցիան անընդհատ գործընթաց է, որը տեղի է ունենում մեդիա-տեխնոլոգիաների, ճյուղերի (հեռուստատեսություն, ռադիո, թերթ), կոնտենտի և լսարանի տարբեր

---

[1] Տե՛ս **Вартанова Е. Л.**, Медиаэкономика зарубежных стран. Учебное пособие, М., 2003, Аспект-Пресс, с. 286.

[2] **Вартанова Е. Л.**, К чему ведет конвергенция СМИ?//Информационное общество, 1999, №5, с. 11-14.

խաչմերուկներում»[3]: Այս սահմանումները մատնանշում են, որ լրագրության մեջ կոնվերգենցիայի գործընթացը պետք է դիտարկել դինամիկայի մեջ: Հենց կոնվերգենտ լրագրության «ստատիկ չլինելով» է պայմանավորված հետազոտության արդիականությունը: Ատենախոսությունն ուշադրություն է նաև նրանով, որ այստեղ հայ լրագրության առանձնահատկությունները դիտարկվել են կոնվերգենցիայի գործընթացի ազդեցության ներքո, ինչպես նաև անցկացվել է հայկական, ֆրանսիական և բրիտանական մեդիա-կոնվերգենցիաների կարևորագույն ասպեկտների համեմատական վերլուծություն:

## ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Լրագրության տեսության մեջ «Մեդիա-կոնվերգենցիա» հասկացության **թեմայի մշակվածությունն** անհրաժեշտ է դիտարկել հաղորդակցության տեսության հետազոտությունների, տեղեկատվական հասարակության ու նրա ֆենոմենների ուսումնասիրման համատեքստում: Հասարակության կյանքում տեղեկատվության դերին և տեղին նվիրված տեսական հետազոտություններ են կատարել Մարշալ Մաքլյուենը[4], Այթել դե Սոլա Փուլը[5], Էլվին Թոֆլերը[6], Ուոլթ Ռոսթոուն[7], Ալեքսանդր Կալմիկովը[8]:

Հարկ է ընդգծել, որ լրագրության տեսաբանների միջավայրում մեդիա-կոնվերգենցիայի խնդիրը հաճախ դիտարկվում է առցանց լրագրության զարգացման պրիզմայի միջով: Եվս մեկ կարևոր ասպեկտ. լրագրության որոշ տեսաբաններ մուլտիմեդիա լրագրությունը դիտարկում են կոնվերգենցիայի գործընթացից անջատ:

Մեդիա-կոնվերգենցիային նվիրված կարևորագույն աշխատություններ են Հենրի Ջենքինսի «Convergence Culture: Where Old and New Media Collide[9]-ը, Սթեֆան Քուինի «Convergent journalism. The fundamentals of multimedia reporting[10]-ը, կանադացի տեսաբան Մարկ Ֆրանսուա Բերնիեի «Pratiques novatrices en communication publique: Journalisme, relations publiques et publisite»[11] գիրքը: Այս աշխատությունների մեջ դիտարկվում են մեդիա-կոնվերգենցիայի տնտեսական, սոցիալական, մշակութային կողմերը:

---

[3] **Jenkins H.**, Convergence Culture: Where old and New Media Collide, 2006, New York University Press, P. 8-14.

[4] Տե՛ս **Marshall McLuhan**, The Gutenberg Galaxy: The making of Thipographic Man, Toronto, 1962, University of Tornto Press, 294 p.

[5] Տե՛ս **De Sola Pool**, I. Technologies of Freedom. 1983, Cambridge: Belknap Press; First Edition, 344 p.

[6] Տե՛ս **Тоффлер Элвин**, Шок будущего, М., 2008, АСТ, 560 с.

[7] Տե՛ս **Ростоу Уолт**, Стадии экономического роста: некоммунистический манифест, 1960.

[8] Տե՛ս **Калмыков А. А.**, Медиалогия Интернета, М., 2015, ЛЕНАНД, 272 с.

[9] Տե՛ս **Jenkins H.** Convergence Culture: Where old and New Media Collide, 2006, New York University Press, P. 8-14.

[10] Տե՛ս **Quinn S**. Digital Sub-Editing and Design (Focal Journalism). Oxford: Focal Press, 201, 192 p.

[11] Տե՛ս **Bernier M-F**., Pratiques novatrices en communication publique: Journalisme, relations publiques et publisite, Quebec, 2005, 186 p.

Ռուսալեզու գրականությունից անհրաժեշտ է առանձնացնել Ելենա Վարդանովայի աշխատությունները: Մասնավորապես հիշատակելի է նրա՝ 1999-ին գրած «Դեպի ո՞ւր է տանում ՀԼՄ կոնվերգենցիան» հոդվածը[12], որն ուղենշային դարձավ ռուսաստանյան տեսաբանների համար: Այս գիտնականը «մեդիա-կոնվերգենցիա» հասկացությունը հանգամանալիորեն ուսումնասիրում է նաև այնպիսի աշխատություններում, ինչպիսին են «Արտասահմանյան երկրների մեդիա-տնտեսությունը»[13], «Ռուսաստանի մեդիա-համակարգը»[14]: Հարկ է առանձնացնել նաև «Լրագրությունը և կոնվերգենցիան. ինչու և ինչպես են ավանդական ՀԼՄ-ները վերածվում մուլտիմեդիայի»[15] գիրքը, որը լույս է տեսել 2010-ին՝ Աննա Կաչկաևայի խմբագրությամբ: Այս աշխատության մեջ ուսումնասիրվում են կոնվերգենտ խմբագրության կայացման գործնական օրինակները, ժանրային և գործառութային փոխակերպումները, արդի լրագրողի իրավասության ընդլայնումը: Վերջին աշխատություններից մեզ առավել նշանակալի են թվում երիտասարդ գիտնական Ելենա Բարանովայի գրքերը՝ «Խմբագրությունների զարգացման նոր իրողություններ կամ՝ ինչ է թերթային կոնվերգենցիան»[16] (2016) ու «Կոնվերգենտ լրագրություն. տեսություն և պրակտիկա»[17] (2015):

**Աշխատանքի գիտական նորույթը** պայմանավորված է նրանով, որ այն հայկական կոնվերգենտ լրագրության վերաբերյալ առաջին համակարգային հետազոտություններից մեկն է: Այնտեղ հայկական ՀԼՄ-ների զարգացման համակարգային վերլուծությունն առաջին անգամ իրականացվել է կոնվերգենցիայի գործընթացի ազդեցության ներքո, դիտարկվել են մեդիա-կոնվերգենցիայի իրավական, տնտեսական ասպեկտները, ուսումնասիրվել են հայկական ՀԼՄ-ների խմբագրական գործունեության կազմակերպման փոփոխությունները:

Լրագրության որոշ տեսաբաններ կարծում են, որ կոնվերգենտ ՀԼՄ-ի ստեղծման հիմքում ընկած է նյութական ծախսերի և մարդկային կապիտալի լավարկման գաղափարը: Այս առնչությամբ հատկապես հրատապ է թվում հայկական ՀԼՄ-ների խմբագրական գործունեության կազմակերպման նոր մոդելների ուսումնասիրությունը, որը սույն ատենախոսության կարևոր բաղադրիչներից է:

Աշխատանքի գիտական նորույթը պայմանավորված է նաև լրագրության տեսության մեջ առկա հասկացությունների ու սահմանումների, ինչպես նաև լրագրության

---

[12] Տե՛ս **Вартанова Е. Л.**, К чему ведет конвергенция СМИ?//Информационное общество, 1999, №5, с. 11-14.

[13] Տե՛ս **Вартанова Е. Л.**, Медиаэкономика зарубежных стран. Учебное пособие, М., 2003, Аспект-Пресс, , 335 с.

[14] Տե՛ս **Вартанова Е. Л.**, Медиасистема России. Учебное пособие, М.,2015, Аспект-Пресс, 384 с.

[15] Տե՛ս Журналистика и конвергенция: почему и как традиционные СМИ превращаются в мультимедийные/ под ред. А. Г. Качкаевой, М., 2010, 200 с.

[16] Տե՛ս **Баранова Е. А.**, Новые реалии развития редакций, или что такое газетная конвергенция/монография, М.,2016, ИНФРА-М, 186 с.

[17] Տե՛ս **Баранова Е. А.**, Конвергентная журналистика: теория и практика, М., 2015, Из-во Юрайт, 269 с.

մեջ կոնվերգենցիայի գործընթացին վերաբերող եզրերի վերլուծության անցկացմամբ, մի շարք նոր սահմանումների ձևակերպմամբ, եզրերի մեկնաբանմամբ:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության **օբյեկտը** լրագրության մեջ մեդիա-կոնվերգենցիայի գործընթացն է, հայկական ԶԼՄ-ների զարգացումը դրա ազդեցության պայմաններում, **առարկան**՝ լրագրության մեջ կոնվերգենցիայի գործընթացի տեսական և գործնական ասպեկտների ուսումնասիրությունը:

Ելնելով թեմայի գիտագործնական նշանակությունից՝ **ատենախոսության նպատակը** մեդիա-կոնվերգենցիայի հիմնական հասկացությունների և սահմանումների համակարգումն է, «մեդիա-կոնվերգենցիա» հասկացության ընդհանուր սահմանման մշակումը, ինչպես նաև հայկական ԶԼՄ-ների համակարգային և համեմատական վերլուծությամբ դրանց՝ կոնվերգենցիայի գործընթացի ազդեցության ներքո զարգացման առանձնահատկությունների վերհանումը:

**Աշխատանքի խնդիրները.**

1. Վերլուծել «մեդիա-կոնվերգենցիա» հասկացության՝ լրագրության տեսության մեջ առկա հիմնական սահմանումները՝ դրանք դիտարկելով ժամանակագրական զարգացման մեջ: Վեր հանել մեդիա-կոնվերգենցիայի հիմնական տեսակները: Դիտարկել «մուլտիմեդիա» լրագրություն հասկացությունը կոնվերգենցիայի գործընթացի համատեքստում:

2. Դիտարկել հայկական առցանց լրագրության զարգացման փուլերը, վերլուծել տեղեկատվության տարածման խողովակների ընդլայնման գործընթացը, պարզել կոնվերգենտ ԶԼՄ-ների խմբագրական գործունեության կազմակերպման առանձնահատկությունները, տարորոշել միավորված կոնվերգենտ խմբագրության հիմնական բաղադրիչները:

3. Խմբագրական գործունեության կազմակերպման կառուցվածքային փոփոխությունների համատեքստում գործնական օրինակներով դիտարկել արդի լրագրողի իրավասության փոփոխությունները, տեսականորեն հիմնավորել «ունիվերսալ լրագրող» հասկացությունը:

4. Անցկացնել հայկական, ֆրանսիական և բրիտանական կոնվերգենտ լրագրության համեմատական վերլուծություն:

5. Ուսումնասիրել լրագրության գործառական և ժանրային փոփոխությունները կոնվերգենցիայի պրոցեսի ազդեցության ներքո:

6. Պարզել կոնվերգենտ լրագրության զարգացման առանձնահատկությունն ու հիմնական վեկտորները:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների կատարման համար օգտագործվել է գիտական մեթոդների համալիր՝ տեսական և գործնական տվյալների

վերլուծություն, գործնական տվյալների համադրում, համեմատության մեթոդներ, համակարգավորում, ինդուկցիա, տեսական և փաստագրական նյութի հավաքման ու մեկնաբանման մեթոդ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Աշխատանքում դիտարկվել է 1990-ականների երկրորդ կեսից մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է վերոնշյալ նպատակներին և խնդիրներին համապատասխան: Այն կազմված է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երկու գլուխներից, եզրակացություններից, գրականության և հավելվածների ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորվում են թեմայի ընտրությունն ու արդիականությունը, դիտարկվում է դրա գիտական մշակվածության աստիճանը, ինչպես նաև հիմնավորվում է աշխատանքի գիտական նորույթը: Ձևակերպված են նաև հետազոտության օբյեկտը և առարկան, ինչպես նաև նպատակներն ու խնդիրները, հստակ սահմանված են հետազոտության ժամանակային և աշխարհագրական շրջանակները: Այստեղ նշված են նաև ատենախոսական հետազոտության մեթոդները, տեսական ու գործնական նշանակությունը, ներկայացված է ատենախոսության կառուցվածքը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
## ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱՅԻ ՊՐՈՑԵՍԸ և ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ատենախոսության **առաջին գլուխը** կազմված է չորս ենթագլուխներից և նվիրված է հայկական կոնվերգենտ լրագրության ծագմանը, զարգացմանն ու արդի վիճակին:

Առաջին ենթագլխում («**Կոնվերգենցիայի պրոցեսի ծագումը և նրա ազդեցությունը հայ լրագրության վրա**») կոնվերգենցիայի գործընթացը դիտարկվում է 20-րդ դարի երկրորդ կեսին անհատի և հասարակության կյանքում տեղեկատվության դերի հայեցակարգերի համատեքստում: Ներկայացվում են նաև լրագրության տեսաբաններերի մոտեցումները «մեդիա-կոնվերգենցիա» երևույթի մասին, տրվում են «մեդիա-կոնվերգենցիա» հասկացության սահմանումները՝ լայն և նեղ իմաստներով: Դիտարկելով ԶԼՄ-ների տարբեր տեսակների կոնվերգենցիան՝ եզրակացվում է, որ այդ գործընթացը կանխորոշել է տեխնոլոգիական կոնվերգենցիան, իսկ ԶԼՄ-ների տարբեր տեսակների մերձեցումն սկսվել է 20-րդ դարի 90-ականներին՝ կապված առցանց լրագրության սկզբնավորման հետ:

Մանրամասն դիտարկվել են հայկական լրագրության զարգացման առանձնահատկությունները կոնվերգենցիայի գործընթացի պայմաններում: Հետազոտությունը ցույց է տալիս, որ հայկական կոնվերգենտ լրագրության կայացման հիմքում ընկած էին տպագիր պարբերականները, որոնք սկսեցին ստեղծել իրենց էլեկտրոնային տարբերակները: Տեղեկատվության տարածման խողովակների ընդլայնման ու դիվերսիֆիկացման առաջին օրինակները չհանգեցրին կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների խմբագրությունների ու լրագրողի աշխատանքում: Հայաստանում ինտերնետի որակի աստիճանական բարելավումը, ինչպես նաև Ցանցի օգտատերերի թվաքանակի ավելացումը պայմաններ ստեղծեցին առցանց լրագրության է՛լ ավելի արդյունավետ զարգացման և կոնվերգենտ ԶԼՄ-ների ի հայտ գալու համար:

Ուշագրավ է, որ Հայաստանում տարիների ընթացքում այդպես էլ չստեղծվեց կոնվերգենտ ԶԼՄ՝ բոլոր հիմնական չորս համակարգերի (տպագիր պարբերական, հեռուստաալիք, ռադիոկայան և առցանց ռեսուրս) ընդգրկմամբ: Տարիների ընթացքում հայկական մեդիա-շուկան սահմանեց լրագրության մեջ կոնվերգենցիայի գործընթացի զարգացման հստակ վեկտորը՝ հիմնական ռեսուրսի մերձեցումը և ձուլումն իր էլեկտրոնային տարբերակի հետ: Մոդելը, որի պարագայում կոնվերգենցիան ընթանում է երկու հարթակներում, անվանվել է «ոչ լրիվ»: Հայկական մեդիա-դաշտում առկա են բավականաչափ ռեսուրսներ, որոնք իրենց կառուցվածքով համապատասխանում են ոչ լրիվ կոնվերգենտ ԶԼՄ-ի սահմանմանը: Արդի հայ լրագրությանը նետված հպանցիկ հայացքը կարող է այնպիսի տպավորություն ստեղծել, որ Հայաստանում չկան կոնվերգենտ ԶԼՄ-ներ: Անհրաժեշտ է, սակայն, հաշվի առնել, որ կոնվերգենցիան գործընթաց է, որն ունի աստիճաններ. այն կարող է ընթանալ երկու, երեք, չորս համակարգերում, եթե դիտարկելու չլինենք մոբիլ և հեռավար այլ հարթակները:

Երկրորդ ենթագլխում (**«Մուլտիմեդիան որպես կոնվերգենտ լրագրության մաս»**) փաստվում է, որ մուլտիմեդիա լրագրության հիմքում ընկած է կոնվերգենցիայի գործընթացը՝ կապված հաղորդակցության (նշանային համակարգերի) մի քանի միջոցների միաձուլման հետ՝ մեկ նյութի շրջանակներում: Նշյալ թեմայի շուրջ տեսական աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ մասնագետներ «մուլտիմեդիա» և «կոնվերգենցիա» եզրերն օգտագործում են որպես հոմանիշներ կամ էլ հստակ չեն ամրագրում դրանց փոխկապվածությունը: Մեր կարծիքով՝ մուլտիմեդիա լրագրությունը լրագրության վրա կոնվերգենցիայի ազդեցության բաղկացուցիչ մասն է կամ արդյունքներից մեկը: Մինչ մուլտիմեդիական լրագրության առաջացումը հաղորդակցման յուրաքանչյուր միջոց ենթադրում էր մեկ լեզվի առկայություն, այսինքն՝ իմաստ ստեղծող սեփական մեկ համակարգ: Մուլտիմեդիայի լեզվի առանձնահատկությունն այն է, որ այն համադրում է հաղորդակցման տարբեր միջոցների տարբեր լեզուներ: Եթե հայկական առցանց լրագրության զարգացման սկզբնական փուլում տեղին էր խոսել տեսաձայնային նյութի անբավարարության մասին, ապա այժմ հիմնական խնդիրը մի քանի բաղադրիչների ճիշտ համադրումն է. միաժամանակ դրանց մեծամասնության համար աշխատանքի առավել ընդունելի ձևաչափը բազմամեդիա ժանրային լուծումների կիրառումն է: Հայկական առցանց լրագրության մեջ դասական

մուլտիմեդիա հոդվածներ՝ երեք և ավելի բաղադրիչների օգտագործմամբ, չափազանց հազվադեպ են հանդիպում:

Երրորդ ենթագլխում (**«Կոնվերգենցիայի տեսակները և դրանց բնորոշ առանձնահատկությունները»**) դիտարկվում են կոնվերգենցիայի գործընթացի տարբեր բաղադրիչներն ու աստիճանավորումները:

Մեդիա-կոնվերգենցիայի՝ բազմասպեկտ, դինամիկ և բարդ երևույթ լինելու հանգամանքը նշում են ինչպես ռուս (Ե. Լ. Վարդանովա, Ա. Կաչկաևա)[18], այնպես էլ արևմտյան մասնագետները (Jenkins H.)[19]: Այդ պատճառով էլ դժվարություններ են առաջանում հասկացությունը սահմանելիս: Այժմ արդեն ակնհայտ է, որ մեդիա-կոնվերգենցիան ոչ միայն ՀԼՄ տարբեր տեսակների մերձեցումն է մեկ համակարգում կամ մի քանի ՀԼՄ-ների սերտ համագործակցությունը, կամ էլ տեքստի, տեսաձայնային նյութերի համադրումը, այլև այդ բոլորը միասին վերցրած:

Լրագրության մեջ «կոնվերգենցիա» հասկացության՝ արևմտյան և ռուս տեսաբանների առաջարկած դասակարգումների ուսումնասիրությունը մատնանշում է, որ հենց տեխնոլոգիական կոնվերգենցիան է, որի հիմքում ընկած է թվայնացման գործընթացը, իր հետևից տարել կոնվերգենցիայի մյուս տեսակները: Տեղեկատվությունը պահելու ձևաչափի փոփոխությունը, տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացումը և դրանց աստիճանական կոնվերգենցիան հանգեցրին այն բանին, որ ՀԼՄ-ները զարգացման տեխնոլոգիապես միանգամայն նոր և ուրույն հնարավորություններ ստացան: Վերացվեցին ժամանակային ու տարածական սահմանափակումները ՀԼՄ-ների աշխատանքում, ավանդական ՀԼՄ-ները ձեռք բերեցին զարգացման նոր միջավայր, իսկ լսարանն զգալիորեն ավելի մոտեցավ լրագրողին: Տեխնոլոգիական կոնվերգենցիան հիմք ծառայեց մեդիա-արդյունաբերության տարբեր ասպեկտների մերձեցման հաջորդ գործընթացների համար:

Այս ենթագլխում դիտարկվում են նաև հորիզոնական և ուղղահայաց դաշինքների գործունեության առանձնահատկությունները: Հորիզոնական դաշինքներն ստեղծվում են այն կառույցների միջև, որոնք մատուցում են նույն հեռահաղորդակցային ծառայությունները: Ուղղահայաց դաշինքներում ինտեգրումն ընթանում է այն կառույցների միջև, որոնք գործում են հին ու նոր ՀԼՄ-ների ոլորտում:

Անցկացրած ուսումնասիրությունների արդյունքում եզրակացվում է, որ, բացի ուղղահայաց և հորիզոնական միություններից, անհրաժեշտ է առանձնացնել նաև միավորումների երրորդ՝ խառը տեսակը: Նման կառույցներում տեղի է ունենում և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական ինտեգրացիա:

Չորրորդ ենթագլխում («**Կոնվերգենտ ՀԼՄ-ների տնտեսական առավելություններն ավանդականների նկատմամբ**») դիտարկվել է կոնվերգենտ ՀԼՄ-ների ֆինանսական արդյունավետությունը: Փոփոխությունների արդյունքում ժամանակակից

---

[18] Տե՛ս **Вартанова Е. Л.**, К чему ведет конвергенция СМИ?//Информационное общество, 1999, №5, с. 11-14.

[19] Տե՛ս **Jenkins H**. Convergence Culture: Where old and New Media Collide, 2006, New York University Press, *p. 8-14.*

ԶԼՄ-ները հնարավորություն ունեն գործել մի քանի հարթակներում: Դա նշանակում է, որ նման ԶԼՄ-ների գովազդային հնարավորություններն ընդլայնվում են. դրանք դառնում են ավելի գրավիչ գովազդատուի համար: «Թվային» միջավայրը ևս ԶԼՄ-ներին թույլ է տալիս մանրամասն ուսումնասիրելու իրենց լսարանը, ուշադիր հետևելու թրաֆիկի հոսքերին, հետևաբար տարածել թարգեթային գովազդ: Մուլտիմեդիա-միջավայրում գործելու հնարավորությունը պայմաններ է ստեղծել տրամադրվող կոնտենտի և ԶԼՄ-ների կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնման համար, որը նույնպես դարձել է վաստակի հավելյալ աղբյուր: Եթե դիտարկենք ընդհանրապես մեդիա-համակարգի վրա կոնվերգենցիայի ազդեցությունը, ապա պետք է նշենք, որ ԶԼՄ-ների տնտեսությունը դարձել է ավելի ճկուն ու բազմազան: Դա առաջին հերթին երևում է ԶԼՄ-ների եկամտի աղբյուրների ընդլայնման մեջ:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
## ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱԳՐՈՂԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Ատենախոսության երկրորդ գլուխը ևս ներառում է չորս ենթագլուխ: Այստեղ արդի հայ լրագրության վրա կոնվերգենցիայի գործընթացի ազդեցությունը դիտարկվում է կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունների պրիզմայի միջով: Խոսքը ԶԼՄ-ների խմբագրական գործունեության կազմակերպման տարբեր մոդելների, գործառութային և ժանրային փոփոխությունների, ժամանակակից լրագրողի իրավասությունների ընդլայնման մասին է: Ուսումնասիրությունը հենվում է տեսական աշխատությունների, գործնական օրինակների, կոնտենտ-վերլուծության, ինչպես նաև հայ մեդիա-փորձագետների և մեդիա-մենեջերների կարծիքների վրա:

Առաջին ենթագլխում՝ **«Միավորված խմբագրությունը որպես կոնվերգենտ լրագրության կազմակերպման ձև»**, դիտարկվել են խմբագրական գործունեության կառուցվածքային փոփոխությունները: Գործնական օրինակների քննությունը ցույց է տալիս, որ կոնվերգենտ ԶԼՄ-ների աշխատանքի առավել ընդունելի ձևաչափը միավորված խմբագրությունն է: Մի քանի բաժինների միավորումը մեկ տարածքում նպաստում է միանգամից մի քանի խնդիրների լուծմանը՝ ԶԼՄ-ների գործունեության բարելավում, հարթակների միջև հաղորդակցության դյուրինացում, լրագրողների ստեղծագործական ազատության ապահովում, կոնտենտի արտադրման մի քանի մոդելների կիրառում: Մի քանի հարթակների առկայությունը պայմաններ է ստեղծում տեղեկատվական հոսքերի վերաբաշխման համար, թույլ է տալիս տեղեկատվությունը տարածելու միանգամից մի քանի խողովակներով: Միաժամանակ նկատելի է, որ հայկական ԶԼՄ-ների մի պատկառելի մասը շարունակում է գործել համաձայն ավանդական մոդելի՝ չօգտագործելով ինտերնետի հաղորդակցային հնարավորությունները և խուսափելով հաղորդակցության խողովակների ընդլայնումից: Կարծում ենք՝ այնպիսի գործոններ, ինչպիսին են մեդիա-համակարգի վրա կոնվերգենցիայի ազդեցության հետագա ուժեղացումը և ինտերնետի՝ որպես հաղորդակցության կարևորագույն միջոցի, դերի ու նշանակության միաժամանակյա բարձրացումը ապագայում

կստեղծեն այնպիսի պայմաններ, երբ հայկական ավանդական ՀԼՄ-ներն ստիպված կլինեն դիմելու կառուցվածքային ու բովանդակային փոփոխությունների: Հետազոտության մեջ վեր են հանվել և մանրամասն ներկայացվել խմբագրական գործունեության կազմակերպման մի քանի մոդելներ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Կոնվերգենտ խմբագրության գործառնական և ժանրային առանձնահատկությունները»**, դիտարկվել են գործառութային ու ժանրային փոփոխությունները կոնվերգենցիայի գործընթացի ազդեցության արդյունքում: Դիտարկելով կոնվերգենցիայի ազդեցությամբ լրագրության հաղորդակցական գործառույթի փոփոխությունները՝ հարկ է նշել, որ այդ փոփոխությունների պատճառները հետևյալ գործոններն են՝

- հաղորդակցության իրականացման ալիքների քանակական աճը.
- նույն ՀԼՄ-ի շրջանակներում հաղորդակցության իրականացման մի քանի ալիքների գործելու հնարավորությունը.
- Մեկ լրագրողական նյութում մի քանի հաղորդակցման միջոցների համադրման հնարավորությունը:

Կոնվերգենտ և մուլտիմեդիա ՀԼՄ-ների գործելու պայմաններում առաջին հերթին փոխվում է հաղորդակցությունների առանձնահատկությունը: Նշված փոփոխությունները պայմանավորված են իրական ժամանակի ռեժիմում տեղեկատվության պատրաստման հնարավորությամբ, ինչը պայմաններ է ստեղծում լսարանի հետ անընդմեջ շփման համար: Եթե առաջ պետք էր սպասել նորությունների թողարկմանը կամ թերթին, ապա ներկա պայմաններում տեղեկատվությունը կարելի է ստանալ «այստեղ և հիմա»:

Երկրորդ կարևորագույն փոփոխությունը քոնթենթի փոփոխությունն է, ինչը նույնպես ազդում է հաղորդակցական կապերի առանձնահատկությունների վրա: Մինչև ինտերնետի և առցանց լրագրության ի հայտ գալը ՀԼՄ-ի յուրաքանչյուր տեսակ ենթադրում էր միայն մեկ, լավագույն դեպքում՝ երկու հաղորդակցության միջոց: Մուլտիմեդիա լրագրության հիմքում դրված է հաղորդակցության մի քանի միջոցների՝ տեքստի, ձայնի և պատկերի օգտագործման հնարավորությունը:

Այսպիսով, սպառողը հնարավորություն է ստանում ինքնուրույն կառուցելու տեղեկատվության ստացման գործընթացը, քանի որ լրագրողական նյութում մի քանի տարրերի առկայության պայմաններում հենց օգտատերն է որոշում՝ ինչն օգտագործի, իսկ ինչը մատնի անուշադրության:

Տեղեկատվության սպառողի տեսանկյունից կոնվերգենտ ՀԼՄ-ների գործունեության պայմաններում հնարավորություն է ընձեռվում յուրաքանչյուրի համար ընտրելու առավել ընդունելի հաղորդակցման ալիք: Տվյալ գործընթացն առավել խոր դիտարկելու դեպքում պարզվում է, որ օգտատերը հնարավորություն ունի ծանոթանալու մուլտիմեդիա նյութի հետ, որը ենթադրում է նույն նյութում հաղորդակցման մի քանի միջոցների համատեղ օգտագործումը:

Համաձայն հաղորդակցության տեսության՝ այս գործընթացի վերջնական արդյունք պետք է դառնա հաղորդողի և ստացողի միջև փոխհամաձայնության ձեռքբերումը: Այսպիսով, ՀԼՄ-ն և լսարանը սկսում են ոչ միայն շփվել «հավասարը հավասարի

հետ», այլև ազդել մեկը մյուսի վրա: Այս ազեցությունն առաջին հերթին արտացոլվում է ՁԼՄ-ի ինֆորմացիոն օրակարգի որոշման մեջ թիրախային լսարանի դերի մեծացմամբ:

ՁԼՄ-ների կոնվերգենցիան զգալի ազդեցություն է թողել լրագրության ոչ միայն հաղորդակցական, այլև կազմակերպչական գործառույթի վրա: Լրագրության կազմակերպչական գործառույթ ասելով՝ ընդունված է հասկանալ ՁԼՄ-ի ունակությունը՝ կազմակերպելու մարդկանց միասնական աշխատանքը և ձևավորելու զանգվածային գիտակցությունը: Գործնականում ամենից հաճախ խոսքը լրագրողական ակցիաների և արշավների մասին է, որոնք ուղղված են ընդդեմ ինչ-որ արատավոր երևույթի կամ էլ նպատակ ունեն աջակցություն ցույց տալու:

Տեղեկատվության տարածման և լայն լսարանի ներգրավման համար մի քանի հարթակների առկայության պայմաններում ՁԼՄ-ների առջև այլևս չկա ավելի մեծ լսելիության համար այլ ռեսուրսների հետ համագործակցելու անհրաժեշտությունը:

Կոնվերգենցիայի գործընթացի ազդեցությամբ ժանրային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու ժանրերի չորս խմբեր (համացանցում).

1. ժանրեր, որոնք փոփոխությունների են ենթարկվել համացանցում.
2. առանձնացած ժանրեր.
3. նոր ժանրեր.
4. հիբրիդ և սինթետիկ ժանրեր, որոնց առաջացել են հնի ու նորի միաձուլումից:

Երրորդ ենթագլխում («**Լրագրողի աշխատանքային գործունեության առանձնահատկությունները կոնվերգենտ խմբագրությունում**») դիտարկվում են լրագրողի գործունեության առանձնահատկությունները կոնվերգենտ ՁԼՄ-ների գործունեության պայմաններում: Ժամանակակից լրագրողի իրավասության փոխակերպումն ու ընդլայնումը դարձան լրագրության վրա կոնվերգենցիայի ազդեցության արդյունքները: Այս փոփոխությունները առաջին հերթին պայմանավորված են այն միջավայրի փոփոխությամբ, որտեղ աշխատում են լրագրողները: Խոսքը մուլտիմեդիա միջավայրի մասին է, ուր տեղեկատվության տարածման համար օգտագործվում են հաղորդակցության մի քանի միջոցներ: Սրանով է պայմանավորված «մուլտիմեդիա մտածողության» պահանջը, որը կարելի է մեկնաբանել երկու կերպ՝ թե՛ որպես մուլտիմեդիա նյութեր պատրաստելու անհրաժեշտություն՝ գործադրված լինելով մի քանի հարթակներում, թե՛ որպես համալիր ու արագ մտածելու պահանջ, թեմայի լուսաբանման անհրաժեշտ ձևաչափ և տեղեկատվության տարածման խողովակը գտնելու ունակություն: Մանրամասն ուսումնասիրելով այս փոփոխությունները և մեկնակետ ունենալով ժամանակակից լրագրողի հիմնարար հատկանիշը՝ ունիվերսալությունը, ամենից առաջ անհրաժեշտ է ընդգծել տարբեր հարթակների համար աշխատելու կարողությունը: Հեռուստատեսային, ռադիո- և թերթային լրագրողների ավանդական կոշտ սահմանազատումը, որը գոյություն ուներ մինչև առցանց լրագրության ի հայտ գալը, մեր ժամանակներում աստիճանաբար կորցնում է արդիականությունը, իսկ մեկ հարթակից մյուսին անցումը դառնում է անհամեմատ ավելի ճկուն: Ժամանակակից լրագրողի աշխատանքի

համար ևս կարևոր պահանջ է նշանային տարբեր համակարգերի հետ աշխատելու ունակությունը: Խոսքը ոչ միայն միլտիմեդիա նյութ պատրաստելու, այլ նաև համապատասխան քոնթենթ հավաքելու մասին է: Երկար տարիներ թղթակցի հիմնական պարտականությունն էր համարվում գրագետ լրագրողական տեքստ գրելը: Մուլտիմեդիայի կանոնների տարածման պայմաններում տեքստը դարձավ ընդամենը նյութի բաղադրիչներից մեկը: Լրագրողը ստիպված էր ընդլայնել իր մասնագիտական ոլորտի պարտականությունները, հմտանալ առնչվող գործընթացների մեջ (լուսանկարչություն, օպերատորական գործ): Ունիվերսալ լրագրողը ոչ միայն տեքստ է գրում է, ինչպես նախկինում, այլև նկարահանում է տեսախցիկով, հարցեր է տալիս և մոնտաժում է իր նյութը: Այսպիսի անհրաժեշտություն առաջացել է մի քանի տեսակի ՁԼՄ-ների հետ աշխատելու պահանջի պատճառով: Լրագրողի աշխատանքի նոր չափանիշներն աստիճանաբար փոխարինում են լրագրողական աշխատանքի հետ կապված ավանդական պատկերացումներին: Առցանց մեդիայի ծագման և կոնվերգենցիայի գործընթացի ազդեցության ներքո առաջացել է համապատասխան աշխատակիցներ նախապատրաստելու անհրաժեշտություն:

Չորրորդ ենթագլխում՝ **«Կոնվերգենտ լրագրության զարգացման առանձնահատկությունը և հիմնական վեկտորները»,** անցկացվել է բրիտանական, ֆրանսիական և հայկական կոնվերգենտ լրագրության համեմատական վերլուծություն, դիտարկվել են կոնվերգենտ լրագրության զարգացման կարևորագույն միտումները:

Դիտարկելով մեդիակոնվերգենցիայի զարգացման պատմությունը՝ հարկ է նշել, որ ամեն երկրում այդ գործընթացն ունի իր առանձնահատկությունները: Դա պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով՝ երկրում լրագրության՝ որպես սոցիալական ինստիտուտի, զարգացման տարբեր մակարդակներով, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացով, օրենսդրության առանձնահատկություններով և նույնիսկ քաղաքացիների բարեկեցության մակարդակով: Մի քանի երկրների մեդիադաշտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոնվերգենտ լրագրության յուրահատկությունը և զարգացման վեկտորները հաճախակի որոշում է օրենսդրությունը, որը գործում է ՁԼՄ-ների ոլորտում: Հետազոտության արդյունքում եզրակացվել է, որ կոնվերգենցիա լրագրության զարգացման տրամաբանության վրա զգալի ազդեցություն են ունենում նորմատիվ-իրավական ակտերը, որոնք գոյություն ունեն ՁԼՄ-Ի կարգավորման ոլորտում: Որոշ երկրներում գործում է խիստ օրենդրություն, որի նպատակն է կանխել ՁԼՄ-ների կենտրոնացումը: Դա նշանակում է, որ այդ երկրի ՁԼՄ-ներում կոնվերգենցիան ունի օրենսդրությամբ խստորեն ուրվագծված սահմաններ:

Դիտարկելով կոնվերգենտ լրագրության զարգացման նորագույն միտումները՝ ենթադրվում է, որ հարկավոր է առաջին հերթին առանձնացնել տեղեկությունների տարածման համար լրացուցիչ հարթակների որոնումը: Այդպիսիներից է բջջային հարթակը: Փորձը ցույց է տալիս, որ լրագրության ոլորտում ժամանակակից միտումները Հայաստան են հասնում որոշակի ուշացումով: Բացառություն չդարձավ և «շարժական լրագրության» ոլորտը: Բջջային տեխնոլոգիաների և բջջային համացանցի տարածման շնորհիվ ՁԼՄ-ների համար ստեղծվեց ընդլայնվելու հնարավորություն: Խոսքն

ինչպես բջջային, այնպես էլ այլ գաջետների համար նախատեսված հավելվածների մասին է (e-paper, kindle, iPad):

## Ե Զ Ր Ա Կ Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացումը, թվային ձևաչափով տեղեկատվության պահպանման ու փոխանցման հնարավորությունը, հաղորդակցության այնպիսի միջոցի, ինչպիսին համացանցն է, կայացումը և առցանց լրագրության սկզբնավորումը պայմաններ ստեղծեցին ԶԼՄ-ների կոնվերգենցիայի համար նրանց գործունեության բոլոր հնարավոր փուլերում: Իրականացված հետազոտական աշխատանքի հիման վրա կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1. «Մեդիա-կոնվերգենցիա» հասկացության արդի տեսական ընկալման հիմքում ընկած են տեղեկատվության տարածման մի քանի հարթակների ու միջոցների գործառության մասին պատկերացումները: Հասկացության նման մեկնությունը, սակայն, չի արտացոլում մեդիա-կոնվերգենցիայի բովանդակությունն ամբողջովին: Ասել է թե՝ «մեդիա-կոնվերգենցիա» հասկացության սահմանումը պետք է տալ լայն և նեղ իմաստներով:

Լայն իմաստով մեդիա-կոնվերգենցիան մեդիա-տեխնոլոգիաների, ցանցերի, տերմինալների (տեղեկատվությունն ստանալու և փոխանցելու համար նախատեսված բազմագործառութային սարքավորումների ստեղծում), ծառայությունների (մեկ սարքավորման կամ տեխնոլոգիայի միջոցով տրամադրվում են համատեղ ծառայություններ) շուկաների միաձուլումն է: Նեղ իմաստով մեդիա-կոնվերգենցիան ԶԼՄ-ների մի քանի տեսակների մերձեցումն ու միաձուլումն է, որոնք գործում են կոնվերգենտ խմբագրության հիման վրա:

2. Հարկ է առանձին ուսումնասիրել մուլտիմեդիա-լրագրությունը: Միայն եթե մինչ այդ խոսում էինք տեխնոլոգիաների, շուկաների, խմբագրությունների միաձուլման մասին, ապա այժմ խոսքը վերաբերում է հաղորդակցության տարբեր միջոցների՝ խոսքի, ձայնի ու պատկերի, ուրիշ խոսքով՝ մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության մերձեցմանը:

3. Գործնական օրինակների, մասնավորապես հայկական կոնվերգենտ ԶԼՄ-ների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեդիա-կոնվերգենցիան (նեղ իմաստով) կարող է ունենալ աստիճաններ: Մոդելը, որի պարագայում կոնվերգենցիան ընթանում է երկու կամ երեք հարթակներում, անվանել ենք «ոչ լրիվ» կոնվերգենցիա: Համապատասխանաբար այն ԶԼՄ-ները, որոնց շրջանակներում գործում են բոլոր 4 համակարգերը (հեռուստատեսություն, ռադիո, թերթ և առցանց ռեսուրս), մտնում են «լիակատար» կոնվերգենցիայի կարգի մեջ:

4. Լրագրության տեսության մեջ ընդունված է առանձնացնել հորիզոնական և ուղղահայաց կոնվերգենցիաները: Առաջինի դեպքում խոսքն այն կառույցների միաձուլման մասին է, որոնք հեռահաղորդակցային միանման ծառայություններ են մատուցում: Ուղղահայաց դաշինքներում կոնվերգենցիան ընթանում է հին ու նոր մեդիաների միջև: Նման կառույցներում տեղի է ունենում և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական

ինտեգրում: Կարծում ենք, որ, բացի ուղղահայաց և հորիզոնական դաշինքներից, անհրաժեշտ է առանձնացնել նաև դաշինքների երրորդ՝ խառը տեսակը: Նման կառույցներում տեղի է ունենում և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական ինտեգրում: Ֆրանսիական «NextRadioTV» *մեդիա-խումբը* խառը դաշինքի ցայտուն օրինակ է: Կոնվերգենցիայի գործընթացը «NextRadioTV»-ում տեղի է ունենում ինչպես հին ու նոր մեդիաների, այնպես է բացառապես առցանց ռեսուրսների զարգացման մակարդակում[20]:

5. Հայկական առցանց լրագրության զարգացման պատմության ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ ԶԼՄ-ների կոնվերգենցիայի գործընթացն ավելի հաճախ տեղի է ունեցել հիմնական և լրացուցիչ (էլեկտրոնային) ռեսուրսի միաձուլման արդյունքում: Մեդիա-դաշտի հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ներկա պահին չկա կոնվերգենտ ԶԼՄ, որը գործի բոլոր չորս հարթակներում: Առավել տարածված տարբերակը կոնվերգենցիան է երկու կամ երեք հարթակների հիման վրա: Հայաստանում կոնվերգենտ լրագրության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները տեղի մեդիա-շուկայի առանձնահատկություններն են. դրանք աչքի են ընկնում գովազդի խիստ սահմանափակ ծավալով և շատ փորձագետների կողմից բնորոշվում են որպես «չկայացած»:

6. Կոնվերգենտ լրագրության զարգացման վրա բացասաբար ազդող գործոններից է նաև ԶԼՄ-ների ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Հայաստանում չկա օրենքի կոնկրետ դրույթ, որը սահմանափակում է կոնվերգենտ ԶԼՄ-ների կազմավորումը, բայց «հեռուստառադիոընկերության լիցենզավորման» անհրաժեշտությունն ըստ էության նշանակում է, որ հայկական մեդիա-դաշտում գրեթե անհնար է նոր հեռուստառադիոընկերությունների առաջացումը:

7. Հայաստանում լայն տարածում են ստացել միավորված խմբագրությունները, որոնց աշխատակիցներն ստեղծում են կոնտենտ առկա բոլոր մեդիա-հարթակների համար: Նրանց մի մասը կիրառում է կոնտենտի մեկանգամյա արտադրման և նրա բազմակի տիրաժավորման գործելաոճը: Միաժամանակ առկա են խմբագրության գործունեության կազմակերպման տարբեր մոդելներ, որոնցից ամենատարածվածը հիմնված է այն բանի վրա, որ նյութ հայթայթող լրագրողն ինքն է այն մշակում և նյութը պատրաստում միանգամից մի քանի հարթակների համար:

8. Այս համատեքստում հրատապ է դառնում «ունիվերսալ» լրագրության մասին խոսելը: Սույն հասկացության սահմանումների վերաբերյալ լրագրության տեսաբանների մոտեցումները տարբերվում են, և այսօր չկան արդի «ունիվերսալ» լրագրության հստակ չափանիշներ: Բոլորի կողմից ընդունված սահմանումները մեկնակետ ընդունելու դեպքում պետք է ընդգծել Հայաստանում «ունիվերսալ» լրագրողների լայն տարածումը: Ֆոտո- և տեսանկարահանումների հմտությունները պարտադիր են արդի լրագրողի համար, ընդ որում, արդի լրագրության հիմքում շարունակում է մնալ տեքստը:

---

[20] Տե՛ս Toutvamal La lettre de L`expansion. Eclaircies», 2013, {Электронный ресур}, - Режим доступа: http://toutvamal.philippebloch.com /buzz-media/.

9. Արդի լրագրության գործառույթների փոփոխությունները առաջին հերթին պայմանավորված են նոր հաղորդակցային հնարավորություններով, որոնք ապահովվում են շնորհիվ տեղեկատվության տարածման խողովակների դիվերսիֆիկացման և մուլտիմեդիա-տեքստի առանձնահատկության: Հաղորդակցությունը նոր միջավայրում դարձել է ինտերակտիվ: Օգտատերն այլևս տեղեկատվության պասիվ սպառող չէ. ընդլայնվել են նրա հնարավորությունները, և համապատասխանաբար փոխվում է նաև հաղորդակցության գործընթացի առանձնահատկությունը:

10. Ժանրային փոփոխությունները դիտարկելիս նկատելի է, որ կոնվերգենտ միջավայրում որոշ ժանրեր փոխվել են՝ ընդգրկելով նոր տարրեր (ինտերակտիվ տեսադիպաշար), ինչպես նաև ի հայտ են եկել նորերը (լոնգրիդ): Ժանրային փոփոխությունների համատեքստում հարկ է ընդգծել, որ հայկական էլեկտրոնային ԶԼՄ-ների մեծ մասն ավելի հաճախ դիմում է բազմամեդիա ժանրային լուծումների:

11. Արդի ֆրանսիական, բրիտանական և ամերիկյան կոնվերգենտ ԶԼՄ-ների համեմատական վերլուծությունից բխեցվում է, որ առաջիկայում կոնվերգենտ լրագրության զարգացման կարևորագույն ուղղությունը կդառնա բջջային և «հեռավար» այլ հարթակների է՛լ ավելի լայն յուրացումը:

## Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Մեդիա-կոնվերգենցիային նվիրված տեսական աշխատությունների ուսումնասիրման և վերլուծության հիման վրա սույն հասկացությունն առաջարկվում է դիտարկել համալիր՝ անդրադառնալով լրագրության մեջ կոնվերգենցիայի ինչպես տեխնոլոգիական, տնտեսական կողմերին, այնպես էլ ԶԼՄ-ների կառուցվածքային և բովանդակային փոփոխություններին, ինչը թույլ կտա ամբողջական պատկերացում կազմելու խնդրի վերաբերյալ:

2. «Մուլտիմեդիա» հասկացությունը լրագրության մեջ հարկ է դիտարկել ԶԼՄ-ների կոնվերգենցիայի գործընթացի համատեքստում:

3. Հիմնվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի, ինչպես նաև փորձագիտական հանրույթի կարծիքի վրա՝ փաստվում է, որ օրենսդրությունն այս ոլորտում հնացել է և կարոտ է խոր փոփոխությունների. մասնավորապես պետք է պարզեցվի հեռուստահաղորդումների արտադրման ու հեռարձակման արտոնություն ստանալու գործընթացը: Դրան կարելի է հասնել մուլտի-պլեքս-պրովայդերների ստեղծման և արտոնագրման միջոցով, որը կդյուրինացնի հեռուստաալիքների ու ռադիոկայանների գործունեությունը՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով կոնվերգենտ լրագրության զարգացման համար:

4. Մի քանի հարթակներում գործող ԶԼՄ-ների գործունեության կազմակերպման առավել արդյունավետ ձևը միավորված խմբագրությունն է, հետևաբար կոնվերգենտ ԶԼՄ-ներին առաջարկվում է միավորել արտադրական հատվածներն ու ստեղծել միասնական նյուսռում իրենց գործունեության լավարկման համար:

5. Խմբագրությունների միավորումը պետք է լինի ոչ թե ձևական, այլ բովանդակա+-յին, ինչի արդյունքում կստեղծվի կոնտենտի արտադրման ավելի ճկուն համա-

կարգ բոլոր հարթակների համար: Միավորված խմբագրությունում լրագրողի ստեղծագործական գործունեության շրջանակները պետք է ընդլայնվեն առկա բոլոր հարթակներում աշխատելու հնարավորություն ընձեռելու հիման վրա: Այս փոփոխությունների արդյունքում ԶԼՄ-ների շրջանակներում կստեղծվի լրագրողների՝ դեպի տարբեր հարթակներ անցման ճկուն համակարգ, իսկ ստեղծագործական ազատությունը թույլ կտա ստեղծելու ավելի ինքնատիպ ու որակյալ կոնտենտ:

6. Մի քանի հարթակների գործունեության պայմաններում պետք է մշակվի տարածման առկա խողովակներով կոնտենտի վերաբաշխման համակարգ: Մասնավորապես տեղեկատվական ժանրերն ավելի ընդունելի են ռեսուրսի էլեկտրոնային տարբերակի, ինչպես նաև իրական ժամանակի ռեժիմով աշխատող ռադիոկայանի և հեռուստատալիքի հեռարձակման նպատակով: Վերլուծական նյութերն առավել հարմար են տպագիր պարբերականների համար:

7. Հայկական կոնվերգենտ ԶԼՄ-ների մի մասի էլեկտրոնային ռեսուրսները շարունակում են մնալ որպես հիմնական ռեսուրսի հավելուրդ, ուստի այս մոտեցումն արդյունավետ չէ. էլեկտրոնային ռեսուրսների համար օգտատերերի ավելի մեծ հոսք ապահովելու նպատակով անհրաժեշտ է հրաժարվել աշխատանքի հին մեթոդներից:

8. Հայկական էլեկտրոնային ռեսուրսների կոնտենտը ենթադրում է առավել ընդունելի բազմամեդիա ժանրային լուծումները. մեկ նյութում երկուսից ավելի նշանային համակարգերի ճիշտ համադրման պարագայում կաճի էլեկտրոնային ԶԼՄ-ների արդյունավետությունը:

9. Էլեկտրոնային ռեսուրսների կոնտենտի ուսումնասիրությունը վկայում է նաև այն մասին, որ այդ ԶԼՄ-ները հազվադեպ են դիմում բարդ ժանրային լուծումների: Խոսքը մասնավորապես այնպիսի ժանրի մասին է, ինչպիսին է «լոնգրիդը», որը չափազանց հազվադեպ է հանդիպում հայկական ԶԼՄ-ներում: Կարծում ենք, որ մուլտիմեդիա ժանրային լուծումները, մասնավորապես լոնգրիդը, պահանջված են Հայաստանում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Խաչատրյան Ա.**, Տեխնոլոգիական կոնվերգենցիան որպես կոնվերգենցիա լրագրության կայացման առաջին փուլ, «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան: 2 (37) – Երևան, Լինգվա, 2016, ISSN 1829-3107, էջ 262-269:

2. **Խաչատրյան Ա.**, Կոնվերգենցիա պրոցեսի ազդեցությունը ժամանակակից խմբագրությունների աշխատանքի սկզբունքների վրա, Լրաբեր Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի. Սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ, 2016, ՀՌՀ հրատարակչություն, №3, ISSN 1829-0450, էջ 136-146:

3. **Խաչատրյան Ա.**, Կոնվերգենցիա լրագրության զարգացման առանձնահատկությունները Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում, Կանթեղ: Գիտական հոդվածներ – Երևան, Ասողիկ, 2017, ISBN 978-9939-50-348-6, էջ 94-102:

**Артур Хачикович Хачатрян**

# ПРОЦЕСС КОНВЕРГЕНЦИИ В СИСТЕМЕ СМИ И ЕГО ВЛИЯНИЕ НА СОВРЕМЕННУЮ АРМЯНСКУЮ ЖУРНАЛИСТИКУ

## РЕЗЮМЕ

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук
по специальности 10.01.06 – «Журналистика»

**Защита состоится 21. 06. 2017 г. в 14:30 часов на заседании специализированного Совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу: Ереван, улица Хачатура Абовяна 52/а, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.**

В диссертационной работе рассмотрен процесс конвергенции в журналистике и представлены промежуточные итоги влияния данного процесса на современную армянскую журналистику.

Актуальность и практическая значимость выбора темы обусловлена важнейшими качественными изменениями, которым подвергается система СМИ под влиянием процесса конвергенции. Эти изменения носят системный характер и касаются всех компонентов журналистики как формы коммуникативной практики. Речь идет о трансформации как каналов коммуникации и ее специфики, так и о содержательных изменениях журналистского контента.

Научная новизна диссертации заключается в том, что это одно из первых системных исследований по армянской конвергентной журналистике. Автором был проведен системный анализ развития армянских СМИ под влиянием процесса конвергенции, рассмотрены правовые, экономические аспекты медиаконвергенции, изучены изменения организации редакционной деятельности армянских СМИ.

Объект исследования диссертации – процесс медиаконвергенции, развитие армянских СМИ в условиях влияния процесса конвергенции.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы и предложений.

В введении обоснована актуальность темы исследования, степень научной разработанности темы, научная новизна работы, объект, предмет и цель исследования, методы диссертационного исследования, рамки и задачи исследования.

Первая глава диссертационной работы посвящена возникновению, развитию и нынешнему состоянию армянской конвергентной журналистики.

В первом параграфе первой главы процесс конвергенции автором рассматривается в контексте существовавших во второй половине двадцатого века концепций, посвященных обозначению роли информации в жизни индивида и общества.

Подробно рассмотрены особенности развития армянской журналистики в условиях процесса конвергенции.

Во втором параграфе первой главы автором доказывается, что в основе мультимедийной журналистики лежит процесс конвергенции, связанный со слиянием нескольких средств коммуникации (знаковых систем) в рамках одного материала.

В третьем параграфе первой главы рассмотрены различные компоненты и градации процесса конвергенции в журналистике.

В четвертом параграфе первой главы рассмотрены важнейшие аспекты влияния процесса конвергенции на медиаэкономику.

Во второй главе влияние процесса конвергенции на современную армянскую журналистику рассматривается сквозь призму структурных и содержательных изменений. Речь идет о различных моделях организации редакционной деятельности СМИ, о функциональных и жанровых изменениях, расширении компетенций современного журналиста.

В первом параграфе второй главы рассмотрены структурные изменения редакционной деятельности, ставшие возможными в результате влияния процесса конвергенции.

Во втором параграфе второй главы рассмотрены функциональные и жанровые изменения в результате влияния процесса конвергенции.

В третьем параграфе второй главы рассмотрены особенности деятельности журналиста в условиях функционирования конвергентных СМИ, а также разработка понятия «универсальный журналист» в теории журналистики и практическое воплощение данного явления.

В четвертом параграфе второй главы проведен сравнительный анализ британской, французской и армянской конвергентной журналистики, рассмотрены важнейшие тенденции развития конвергентной журналистики.

В заключении представлен ряд выводов и предложений, которые составляют основу проведенного исследования.

**Arthur Khachatryan**

# THE CONVERGENT PROCESS IN THE SYSTEM OF MASS MEDIA AND ITS INFLUENCE ON THE CONTEMPORARY ARMENIAN JOURNALISM

**Summary**

The Thesis for the degree of Candidate of Philological Sciences
Discipline 10.01.06 – "Journalism"

**The defense will take place on 21.06.2017, at 14:30 at the session of specialized council of High Attestation Commission 012, operating in Yerevan State University. Address: Yerevan, KhachaturAbovyan 52/a ,YSU, the Department of Philosophy, auditory 202.**

In the dissertation we observe the process of convergence in journalism and we introduce the influence of midterm results of this process on the contemporary Armenian journalism.

The relevance and practical importance of the selection of the topic are due to the significant qualitative changes, which have an impact on Mass Media under the influence of the process of convergence. These alterations carry systematic character and refer to the all components of journalism as forms of communicative practice. Here we speak about the modification as means of communication and its peculiarities, as well as about informative changes of journalistic content.

The scientific innovation of dissertation asserts that this is one of the first systematic studies of Armenian convergent journalism. The author conducted a systematic analysis of the development of the Armenian Mass Media under the influence of the convergent process. Here legal and economic aspects of media convergence , changes of the editorial work of Armenian Mass Media are observed.

The subject matter of the study is the process of media convergence of the Armenian Mass Media under the influence of the convergent process.

The dissertation consists of an introduction, two chapters, a conclusion, a bibliography, and suggestions.

The introduction focuses on the relevance of the topic of study, the level of the scientific elaboration of the topic, the scientific novelty of the work, the subject, the scope and the objectives of the study, the methods of the study of dissertation,the frames and the tasks of the study.

The first chapter of the dissertation is devoted to the formation, development, and current state of the Armenian convergent journalism.

In the first paragraph of the first chapter, the author examines the conceptions, that existed in the second half of the 20$^{th}$century and was devoted to the denotation of the information's role in the life of the individual and society. The peculiarities of the

development of Armenian journalism under the influence of the process of convergence are thoroughly examined.

In the second paragraph of the first chapter, the author proves that the multimedia journalism is based on the process of convergence, connected with the fusion of several means of communication (sign system) within one material.

In the third paragraph of the first chapter, we have studied various components and gradations of the process of convergence in journalism.

In the fourth paragraph of the first chapter, we have examined the most important aspects of the influence of convergent process on media economics.

In the second chapter, we have observed the impact of the convergent process on the contemporary Armenian journalism from the point of view of structural and informative changes. This chapter introduces various organization models of Mass Media editorial work , functional and genre changes , expansion of competences of modern journalism.

In the first paragraph of the second chapter, we have examined the structural changes of editorial work, which became possible owing to the result of the impact of the convergent process.

In the second paragraph of the second chapter, we have studied the functional and genre changes under the influence of the convergent process.

In the third paragraph of the second chapter, we have examined the peculiarities of the editorial work of journalism in the conditions of convergent Mass Media functioning, as well as the elaboration of the concept "universal journalist" in the theory of Journalism and practical incorporation of this phenomenon.

In the fourth paragraph of the second chapter, the comparative analysis of British, French and Armenian convergent journalism is carried out, and significant tendencies of development of convergent journalism are observed.

In the conclusion we have introduced a number of deductions and suggestions which comprise the basis of the conducted study.